



Տ. ԵՂԻՇԷ ԱՐԴ. ԴԱԻԹԵԱՆ

Հոգշ. Տ. Եղիշէ Արքեպայ Դաւթեան, աւագանի անունով Պաւէլ, ծնած է յէջմիածին, 1983ին: Զաւակն է Յովհաննէս եւ Մարգարիտ Դաւթեաններու:

Նախնական կրթութիւնը ստացած է Յովհաննէս Յովհաննիսեանի անուան դպրոցին մէջ, յէջմիածին:

1998էն 1999 ծառայած է էջմիածնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

1999ին ընդունուած է որպէս ուսանող Երուսաղէմի Ս. Յակոբեանց Ալէքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանէն ներս, որուն ընթացքը աւարտելէն յետոյ 2004ին սարկաւագ կը ձեռնադրուի ձեռամբ Ամեն. Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի:

2006ին Վարժարանի կրօնական մթնոլորտը ձգելով, եռամսեայ շրջան մը հեռացաւ վարժարանէն: Նոյն տարուայ Դեկտեմբերին յատուկ խնդրագրով կը վերընդունուի Վարժարանէն ներս՝ շարունակելու իր անւարտ ուսումը: 2007ին, Քրիստոսի Այլապերպութեան տօնին, կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի ձեռամբ Դերշ. Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեանի: